պատարագի երգեցողութիւն չլսեն, աչքերն է հանել տուել և քթերն է կտրել տուել, որպէսզի բոլոր քրիստոնեաների վրայ ահ ու սարսափ ձգէ։ Իսկ ազդեցիկ քրիստոնեաներին խոստանում է եղել տալ ամէն տեսակ ապահովութիւն, փառք և պատիւ։

Տեղական բռնակալ խաները նուիրում են նշանաւոր քրիստոնեաներին լայնատարած տափաստաններ, թաւոտ անտառներ, ընտիր վարելահողեր և բէկութեան տիտղոսներ։ Կարճ խօսքով՝ քրիստոնեաներին սոսկալի տանջանքների ենթարկելու համար տրւում է նրանց (բէկերին) գաղտնի հրահանգ և վայրագութեան սանձարձակ իրաւունքներ։ Ահա այսպիսով, 15—20 հազար Հայ ընտանիքներ՝ այլևս անկարող լինելով տանել այն ամէն զարհուրելի տանջանքներն ու անչափ զրկանքները, ընդունում են Մահմէդի ազգակործան կրօնը և հետզհետէ ձուլւում են տեղական մահմեդականների հետ։ Ջալալեան Սրբազանը իւր ճանապարհորդութեան մէջ՝ թրքացած Հայերի թիւը համարում է 14 հազար ընտանիք *)։ Իւրաքանչիւր Հայ ընտանիքում եթէ հաշուելու լինինք 5-ական հոգի, այն ժամանակ 14 հազար ընտանիքում կլինի 70 հազար մարդ, մի պատկառելի թիւ, որ հաւասար է Յակոբ Նահապետի սերունդի եգիպտացոց երկրից Քանանացոց երկիրը գաղթած հրէաների թուին։ Իսկ

*) Տես «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 368.